ԱՐՄՈ ՀԱՐԵՆՑ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏԻՑ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼ ՎՆԱՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների և առհասարակ Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատմության մանրակրկիտ ուսումնասիրությունը, մանավանդ այսօր, հսկայական նշանակություն է ստացել: Պատմագիտության ասպարեզում և առանձնապես բոլշևիզմի պատմության մեջ ընկ. Լ. Պ. Բերիան հսկայական նորմուծություն կատարեց: Ընկ. Բերիան պատմական մեծագույն արժեք ունեցող փաստական նյութերով ցույց տվեց, վոր՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ պատմությունը, Անդրկովկասի և Վրաստանի հեղափոխական ամբողջ շարժումը նրա ծնունդ առնելու առաջին օրից անխզելիորեն կապված է ընկեր Ստալինի աշխատանքի և անվան հետ»:(Լ. Բերիա, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», եջ 7): Ընկ. Բերիան իր նշանավոր զեկուցման մեջ բացեց Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների սկզբնավորման ու ստեղծման պատմության բոցավառ էջերը: Ընկ. Բերիան ստալինաբար պարզաբանեց և ցույց տվեց քաղաքական պայքարի այն գիծը, «վորից դուրս է յեկել մեծ Լենինի ամենամերձավոր գործակից, ամենանվիրված և ամենահետևողական զինակից՝ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ»: Այսպիսի պարզ ու վորոշակի ստալինյան ցուցմունքներից հետո ընկ. Բերիան Անդրկովկասի ազգային հանրապետությունների կուսակցական կազմակերպություններից իրավացիորեն պահանջեց գիտա-հետազոտական լայն աշխատանքի միջոցով մշակել, լուսաբանել հեղափոխական շարժումների պատմությունը, մի պատմություն, վորն անխզելիորեն կապված է ընկեր Ստալինի անվան ու աշխատանքի հետ: Այս ցուցմունքներից հետո թվում եր, վոր մեզանում՝ Խորհրդային Հայաստանում կծավալվեյին լուրջ, խորացված աշխատանք, վորպեսզի յերևան հանվեյին ու ժողովրդական լայն մասսաների սեփականությունը դարձվեյին ինչպես Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների, այնպես էլ հայ ժողովրդի հերոսական պայքարի պատմության այն փառահեղ էջերը, պայքարի, վոր նրանք մղել են մեծ Ստալինի գլխավորությամբ ընդդեմ ինքնակալության, դաշնակների, մենշևիկների, սպեցիֆիկների և դասակարգային ամեն գույնի թշնամիների: Այժմ արդեն հասկանալի յե դառնում, վոր մեր կուսակցության, մեր ժողովրդի համար այդքան կենսական նշանակություն ունեցող աշխատանքը չեյին կատարի յերկար ժամանակ Հայաստանի կուսակցական կազմակերպության գլուխն անցած տրոցկիստական, դաշնակցական, բուրժուա-նացիոնալիստական սպեցիֆիկյան տարրերը: Այժմ արդեն պարզ յերևում է, վոր Անդրկովկասի հեղափոխական շարժումների լուսաբանման և Հայաստանի հեղափոխական շարժումների գիտական մշակման գործը ժողովրդի վոխերիմ թշնամիներ՝ Խանջյանը, Ամատունին, Ակոպովը և մյուս սրիկաներն իրենց տերերի՝ դաշնակցականների պատվերով ձախողեցին: Յեվ դա հասկանալի յե: Մոլի նացիոնալիստ Խանջյանը Հայաստանի հեղափոխական շարժումների և առանձնապես Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմությունը կապում եր միայն և միայն իր անվան հետ: Յեվ նա թույլ չեր տալիս, վորպեսզի արվի այն, ինչ անհրաժեշտ եր մեր յերկրի իսկական պատմության մարքսիստական լենինյան լուսաբանման համար: Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմությունը մշակելու և գրելու համար նացիոնալիստ Խանջյանն իր արբանյակներին հատուկ պատվեր եր տալիս: Այդ տեսակետից բնորոշ է Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության գիտահետազոտական ինստիտուտում նստած դաշնակցական, բուրժուա-նացիոնալիստական տարրերի գործունեությունը: Այդ ինստիտուտում յերկար ժամանակ իր սև գործը կատարեց Կարո Ղազարյանը: Նա մեր հեղափոխական շարժումների պատմության հսկայական նյութերն այնպես «խմբագրեց», «դասավորեց», վորպեսզի բոլոր դեպքերում, բոլոր գործողություններում փայլի նացիոնալիստ-հակահեղափոխական Խանջյանը: Կ. Ղազարյանը ինստիտուտի ամբողջ ապարատը գործի յե դրել միայն Խանջյանին վերաբերող նյութերի հավաքագրման (ավելի ճիշտ հորինելու) համար: Նրանք ինստիտուտում թաքցրել և հրապարակից հանել են մեր կուսակցության, մեր ժողովրդի պատմությանը վերաբերող արժեքավոր նյութերը, վորոնք անմիջականորեն կապված են ընկեր Ստալինի ղեկավարությամբ Հայաստանում դեռևս 1905 թվի հեղափոխության շրջանում կատարված աշխատանքին: Հայ ժողովրդի թշնամիներ՝ Ամատունին, Ակոպովը, Գուլոյանը և մյուսները, վորոնք հարազատորեն շարունակեցին հակահեղափոխականներ Աշոտ Հովհաննիսյանի, Կոստանյանի, Խանջյանի քաղաքականությունը, դաշնակների պատվերով ձախողեցին մեր պատմագիտության զարգացման գործը: Տրոցկիստ Ամատունին, յերբ անցավ Հայաստանի Կոմկուսակցության կենտրոնական Կոմիտեյի քարտուղարի պոստը, սկսեց ուժեղ աղմկարարություն այն մասին, թե հարկավոր է արագորեն մշակել ու լուսաբանել մեր պատմության հարցերը: Ժողովրդի թշնամի Ամատունին իր ամպագորգոռ ճառերում և յելույթներում միշտ թմբկահարում եր պատմության ֆրոնտի աշխատանքների ուժեղացման անհրաժեշտության մասին, սակայն իրականում վոչինչ չեր անում: Նա իր հակահեղափոխական եյությունը վորոշ ժամանակ բավականին ճարպիկ կարողացավ թաքցնել այդ աղմկահարության, ուլտրա-հեղափոխականության դիմակի տակ: Ամատունին պատմագիտության ֆրոնտում ևս դասավորելով իր կադրերը, բացարձակապես ճնշեց ներքևից յեկող նոր, թարմ յերիտասարդ կադրերի նախաձեռնությունը Հայաստանի Կոմունիստական կուսակցության և առհասարակ հայ ժողովրդի հերոսական պայքարի պատմության մարքսիստական լուսաբանման ասպարեզում: Ժողովրդի թշնամի Ամատունին մեր կուսակցության, մեր ժողովրդի պատմությունը ֆալսիֆիկացիայի յենթարկելու համար հատուկ պատվերներ տվեց Կուսպատի ինստիտուտում վերջերս իշխող Սարիբեկ Կարապետյանին, Մորուսին և մյուսներին: Նրանք հավատարիմ գտնվեցին Ամատունու նկատմամբ և ականջները թափահարելով ինստիտուտի վողջ աշխատանքը [illegible] դրին Ամատունու հակահեղափոխական պատվերները կատարելու համար: Այսօր այդ մարդիկ մեծ պատասխանատվություն պետք է կրեն. նրանք պետք է յենթարկվեն խստագույն պատժի իրենց այդ բոլոր արարքների համար:

Հակահեղափոխական Ամատունու և մյուս սրիկաների քաղաքականությամբ խոշոր վնասարարություն է կատարվել նաև մեր պետական արխիվում, Հանրային գրադարանում, Կուսհրատում և գիտական մի շարք այլ հաստատություններում: Հակահեղափոխական Խանջյանը և Ամատունին Կուսհրատում, Պետհրատում նստած նացիոնալիստ սպեցիֆիկների (Հ. Հովհաննիսյան, Ն. Մակինց, Զոփուրյան և ուրիշների) միջոցով հրատարակեցին և մեր ժողովրդական լայն մասսաներին հրամցրին «պատմական» հակահեղափոխական մի շարք աշխատություններ: Դրանցից պետք է հիշատակել Մելիք Յոլչյանի Անդրկովկասի բոլշևիկների կազմակերպությունների պատմությունը ֆալսիֆիկացիայի յենթարկող աշխատությունը, վորը հակահեղափոխականներ՝ Խանջյանի և Ամատունու պահանջով մի քանի անգամ վերահրատարակվել է: Հակահեղափոխական Մելիք Յոլչյանն իր այդ գըրքում պատմության իրական փաստերը կեղծում է հօգուտ դաշնակցության: Նա իր այդ գրքով Անդրկովկասի բոլշևիկների և մեր մեծ առաջնորդի հասցեյին զրպարտություններ է անում: Դեռևս այդ գրքի յերկրորդ հրատարակության ժամանակ մեր յերիտասարդ գիտական աշխատողներից մի քանիսը մերկացնող հոդվածներ գրեցին այդ հակահեղափոխական գրքի հրատարակման դեմ: Սակայն Կենտրոնական Կոմիտեյում նստած հակահեղափոխականներ՝ Խանջյանն ու Ամատունին ասացին՝ «Լավ կանեն այդ յերիտասարդները լռեն, նրանք դեռ պետք է սովորեն»: Հակահեղափոխական սրիկաներն այդպես ճնշեցին ներքևից յեկող քննադատությունը և մասսային հրամցրին, ինչպես Յոլչյանի, այնպես և Մ. Ներսեսյանի, Մ. Պարսամյանի, Հ. Զորյանի և մի շարք այլ մարդկանց հակահեղափոխական գործերը: Պատմության և գրականության հարցերը դաշնակցական նացիոնալիստական դիրքերից լուսաբանող այդ աշխատությունները գովերգեցին Խանջյանի և Ամատունու մանկլավիկներ՝ Զուբարը, Հովհաննիսյանը, Աթայանը, Բզնունին, վորոնք ի դեպ մոնոպոլիայի եյին յենթարկել մեր կուսակցական մամուլը և, սողալով Խանջյանի ու Ամատունու առաջ, կատարում եյին իրենց սև գործը:

Հայաստանում տեղի ունեցած վերջին իրադարձություններից հետո առանձնահատուկ, խորացված աշխատանք է պահանջվում մեզնից, վորպեսզի կարողանանք կարճ ժամանակամիջոցում մի կողմից խայտառակ լիկվիդացիայի յենթարկել ժողովրդի թշնամիների վնասարարության հետքերը, և մյուս կողմից լարված ստեղծագործական աշխատանքով յերևան հանենք պատմական իրական այն փաստերը, վորոնք թշնամիներն անարգել ֆալսիֆիկացիայի յեն յենթարկել: Անդրկովկասի ու Հայաստանի բոլշևիկների և առհասարակ հեղափոխական շարժումներին վերաբերվող պատմական արժեքավոր փաստեր կան մեր արխիվներում, գիտա-հետազոտական ինստիտուտներում: Այդ հարուստ նյութերը յերևան հանելու համար այսօրվանից պետք է լարված աշխատանք սկսել: Մեր ժողովրդի համար մեծագույն հետաքրքրություն է ներկայացնում, մանավանդ Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության, ինքնակալության, դաշնակների, սպեցիֆիկների դեմ մեր կուսակցության մղած ու հայ աշխատավորության պայքարի փաստերի լուսաբանությունը, փաստեր, վորոնք անխզելիորեն կապված են ընկեր Ստալինի աշխատանքի և անվան հետ: Դաշնակցական-նացիոնալիստները խնամքով թաքցրել են ընկեր Ստալինի անմիջական գլխավորությամբ հայ իրականության մեջ դեռևս ռուսական առաջին հեղափոխության շրջանում տեղի ունեցած բազմաթիվ ըմբոստությունների, ապստամբությունների, ցույցերին վերաբերվող նյութերը և փաստերը:

Ընկեր Ստալինի անվան ու աշխատանքի հետ կապված հսկայական հետաքրքրություն ներկայացնող պատմական հարուստ բազմաթիվ փաստերը մինչև այժմ թաքցրված են յեղել դաշնակցական-նացիոնալիստական, սպեցիֆիկյան տարրերի կողմից: Այժմ մեր խնդիրն է՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ առանց հապաղելու մինչև վերջ իսպառ լիկվիդացիայի յենթարկել վնասարարության հետքերը պատմագիտության ֆրոնտում և ստալինյան ստեղծագործական աշխատանքով մեր պատմագիտությունը դնել իր իսկական բարձրության վրա: